



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

23 հունվարի 2024 թվականի թիվ 13-Ա  
ք. Երևան

#### «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն, (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի դեկտեմբերի 28-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 57 վարչական վարույթի նյութերը, **պարզեց**.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս լսողական մեդիաձառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հեռարձակող) «Ռադիո Ջան» լսողական ծրագրի եթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է **Օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի** դրույթի պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2023 թվականի դեկտեմբերի 28-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի զեկուցագիրը՝ համաձայն որի հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողը, Գյումրի քաղաքում փոփոխելով տեսալսողական ծրագիրը, «Ռադիո Ջան» տեսալսողական ծրագրով հեռարձակել է «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» լսողական ծրագիրը:

Հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 29-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը 2024 թվականի հունվարի 08-ի թիվ 01 գրությամբ Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանմամբ հայտնել է հետևյալը.

*«Հայտնում ենք, որ վերը նշված խնդիրը տեխնիկական բնույթի է և հետևանք է տվյալ տարածքում հոսանքի հաճախակի անջատումների և կտրուկ տատանումների՝ ինչի*

արդյունքում սարքավորումների կարգաբերումները խախտվում են և արդյունքում եթեր է հեռարձակվում միանգամայն այլ ռադիոհաղորդում: Սարքավորումներին կից տեղադրված անխափան սնուցման սարքերը ևս չեն ապահովագրում հոսանքի տատանումների հետևանքով նման խնդիրների առաջացումը և շարքից դուրս են գալիս:

Ներկայումս բանակցություններ ենք վարում մեր սարքավորումները հոսանքի պահուստային (ռեզերվային) սնուցում ունեցող առավել ապահով վայր տեղափոխելու ուղղությամբ, որը կբացառի նման իրավիճակների և խնդիրների առաջացումը: Սակայն այդ գործընթացը որոշակի ժամանակ և լրացուցիչ սարքավորումների ներմուծում է պահանջում, ուստի ներկայումս առավել ուշադիր և հետևողական կլինենք փոխալ խնդրի նկատմամբ՝ մինչև հարցի արմատական լուծումը»:

### **Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.**

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

#### **Օրենքի 46-րդ հոդվածի 12-ին մասը սահմանում է.**

«Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել:»:

**Օրենքի 60-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝** լսողական ծրագիր հեռարձակողների համար անալոգային հաճախականությունների վրա տարածվում են սույն օրենքով սլոթի վերաբերյալ նախատեսված կարգավորումները:

Փաստենք, որ Հեռարձակողը 2017 թվականի հոկտեմբերի 06-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում լսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում լսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները՝ ամրագրում ենք, որ հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել, սակայն Հեռարձակողը՝ որպես հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած, Գյումրի քաղաքում փոփոխելով տեսալսողական ծրագիրը «Ռադիո Ջան» տեսալսողական ծրագրով, հեռարձակել է «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» լսողական ծրագիրը՝ չպահպանելով Օրենքի 46-րդ հոդվածի 12-ին մասի պահանջը:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում են իրավական հետևանքներ, և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-ին մասով սահմանված դրույթների պահանջը:

Համադրելով Օրենքի պահանջը և Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումն այն մասին, որ իրենց կողմից օրենսդրական պահանջի խախտումը տեխնիկական խտտանի արդյունք է և այսուհետ կբացառվեն նման իրավիճակները՝ հիմնավոր և բավարար չէ Օրենքի 46-րդ հոդվածի 12-ի մասի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար:

**Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝** սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

**Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.**

«Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 46-րդ հոդվածի 12-րդ մասով, 60-րդ հոդվածի 14-րդ մասով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԲԱԴԻՈ ՊԲՈ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վարչական տույժը՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. հունվարի 23  
ք. Երևան